ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 14 » փետրվար 2025թ. No 895- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ) ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 31.3-րդ հոդվածի 1-ին մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպության (ասոցիացիայի) միջև կնքվող համագործակցության համաձայնագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2025 թվականի փետրվար « 14 » - ի
N 895 - Ա հրամանի

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՁԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԻ) ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին) ի դեմս նախարար՝ _____, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____(այսուհետ՝ Ասոցիացիա) ի դեմս նախագահ՝_____, ով գործում է Ասոցիացիայի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին հիշատակվելու դեպքում՝ այսուհետ՝ Կողմեր, հաշվի առնելով Կողմերի առողջապահության բնագավառում համագործակցության հանդեպ փոխադարձ հետաքրքրությունները, Կողմերը կնքեցին սույն համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի շուրջ՝

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Համաձայնագրով Կողմերը պայմանավորվում են առողջապահության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն Համաձայնագրով սահմանված պահանջներին համապատասխան, Կողմերի համար ընդունելի ձևաչափով արդյունավետ փոխգործակցության իրականացման համար, որն ուղղված է սույն Համաձայնագրի 1.3-րդ կետով սահմանված նպատակների իրագործմանը:

1.2. Սույն համաձայնագրի շրջանակում լիազոր մարմինը համագործակցում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի (այսուհետ՝

Օրենք) պահանջներին համապատասխանող բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպությունների (ասոցիացիաներ) հետ:

1.3. Համագործակցության նպատակներն են՝

1.3.1. առողջապահության բնագավառում բնակչության առողջության պահպանումը և բարելավումը.

1.3.2. բժշկական, դեղագիտական և ստոմատոլոգիական գործունեության զարգացումը.

1.3.3. բուժաշխատողների իրավունքների իրացմանը օժանդակությունը և պաշտպանությունը.

1.3.4. գիտական, կրթական, գիտահետազոտական, կլինիկական, լաբորատոր և նեղ մասնագիտական այլ գործունեության հետ կապված խնդիրներ լուծումը:

1.4. Համագործակցության հիմնական սկզբունքներն են.

1.4.1. օրինականության սկզբունքը. Համաձայնագրի առարկայի և դրա իրականացմանն ուղղված գործողությունների համապատասխանությունը Կողմերի՝ իրավական ակտերով սահմանված գործառույթներին: Կողմերը սույն համագործակցության սահմաններում իրենց գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Համաձայնագրով.

1.4.2. փոխօգնության և համագործակցության սկզբունքը. Կողմերի շահագրգռվածությունը համաձայնագրի առարկայի նկատմամբ և միմյանց լիարժեք աջակցության տրամադրումը Համաձայնագրի առավելագույն արդյունավետության և նախատեսված նպատակներին հասնելու համար:

1.4.3. Կողմերի կողմից ձեռք բերված պայմանավորվածությունները կատարելու պարտավորություն:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼԸ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Համագործակցությունը լիազոր մարմնի հետ սկսվում է ասոցիացիայի կողմից Համաձայնագրին միանալու կամարտահայտությունն արտահայտող գրավոր ծանուցման պահից:

2.2. Սույն համաձայնագրի 2.1-ին կետով սահմանված գրավոր ծանուցման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Ասոցիացիայի՝ Օրենքի պահանջներին համապատասխանության դեպքում, լիազոր մարմնի և Ասոցիացիայի միջև կնքվում է Համաձայնագիրը, որը գործում է անորոշ ժամկետով: Ասոցիացիայի՝ Օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում, լիազոր մարմնի կողմից Համագործակցությունը նույն ժամկետում գրավոր մերժվում է:

2.3. Ասոցիացիան իրավասու է դուրս գալու սույն համաձայնագրից, իսկ լիազոր մարմինը՝ հրաժարվելու համագործակցությունից՝ ոչ ուշ, քան նշված գործողությունները կատարելուց 3 (երեք) ամիս առաջ՝ իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով մյուս կողմին և կարգավորելով սույն համաձայնագրի գործողության ընթացքում ծագած և չկատարված պարտավորությունները:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Օրենքի պահանջներին համապատասխանող ասոցիացիաները իրականացնում են հետևյալ գործառույթները.

3.1.1. մասնակցում են առողջապահության բնագավառի նորմատիվ իրավական ակտերի մշակմանը՝ նախնական քննարկումներ կազմակերպելով իրենց անդամների շրջանում.

3.1.2. մշակում են կլինիկական ուղեցույցներ և գործելակարգեր և գործադիր մարմնի կողմից հավանության արժանացած կլինիկական ուղեցույցները և գործելակարգերը ներկայացնում են լիազոր մարմնի հաստատմանը

3.1.3. լիազոր մարմնի սահմանած կարգով իրականացնում են իրենց մշակած և լիազոր մարմնի հաստատած կլինիկական ուղեցույցների և գործելակարգերի ներդրմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև առնվազն երեք տարին մեկ անգամ անհրաժեշտության դեպքում լիազոր մարմին են ներկայացնում առաջարկություններ համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

3.1.4. լիազոր մարմնի առաջարկությամբ մասնակցում են լիազոր մարմնի կողմից մշակվող չափորոշիչների քննարկմանը.

3.1.5. լիազոր մարմնի առաջարկությամբ մասնակցում են բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկի և տեսակների շրջանակում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկերի կազմմանն ու դրանց վերանայման աշխատանքներին.

3.1.6. լիազոր մարմնի առաջարկությամբ մշակում կամ մասնակցում են բժշկական օգնության և սպասարկման ընթացակարգերի մշակմանը՝ ըստ բժշկական օգնության և սպասարկման տեսակների.

3.1.7. կազմում և լիազոր մարմին են ներկայացնում համապատասխան մասնագետների ցանկ, որոնք լիազոր մարմին դիմած իրավասու մարմիններին փորձագիտական ծառայություններ կարող են մատուցել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգերով նախատեսված դեպքերի համար.

3.1.8. լիազոր մարմին են ներկայացնում առաջարկություններ բուժաշխատողներին խրախուսելու վերաբերյալ.

3.1.9. իրենց անդամների համար օրենքով սահմանված կարգով անվճար հիմունքներով ապահովում են տարեկան առնվազն 10 ՇՄՋ կրեդիտ.

3.1.10. օրենքով սահմանված կարգով կարող են մասնակցել իրենց անդամների իրավունքների պաշտպանությանը, այդ թվում՝ տեսչական մարմինների կազմած վարչական ակտերի բողոքարկմանը.

3.1.11. առաջարկություններ են ներկայացնում լիազոր մարմին Հայաստանի Հանրապետությունում չգրանցված, սակայն առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեության ընթացքում կենսական անհրաժեշտ դեղերի վերաբերյալ՝ դրանց գրանցումը կազմակերպելու նպատակով, այդ թվում՝ պետական պատվերի շրջանակներում.

3.1.12. օրենքով սահմանված կարգով ասոցիացիաներին կարող են պատվիրակվել նաև այլ գործառույթներ, որոնք համապատասխանում են նրանց կանոնադրությանը.

3.1.13. լիազոր մարմնի նախաձեռնությամբ 5-օրյա ժամկետում լիազոր մարմին են ներկայացնում նախարարության խորհրդատուների երեքական թեկնածուի, որոնցից մեկին լիազոր մարմինը կարող է նշանակել խորհրդատու

3.1.14. ներկայացնում են թեկնածուներ՝ բուժաշխատողների հավաստագրման համար անցկացվող թեստային առաջադրանքներ մշակող մասնագիտական հանձնաժողովներում և բուժաշխատողների հավաստագրման մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկելու նպատակով.

3.1.15. ներկայացնում են թեկնածուներ՝ բուժաշխատողների անհատական լիցենզիայի և անցումային անհատական լիցենզիայի տրամադրման նպատակով կազմակերպվող կենտրոնացված քննության առաջադրանքների մշակման աշխատանքներին մասնակցելու, ինչպես նաև կենտրոնացված քննություն իրականացնող քննական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով:

3.2. Լիազոր մարմինը Համաձայնագրի շրջանակում իրականացնում է հետևյալ գործառույթները.

3.2.1. իրավունք ունի չհաստատել ասոցիացիաների կողմից սահմանված կարգով հաստատման ներկայացված ուղեցույցները և գործելակարգերը, եթե դրանք հակասում են ապացուցողական բժշկության սկզբունքներին, և (կամ) դրանք հնարավոր չէ կիրառել Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ նյութատեխնիկական ապրանքների բացակայության կամ ոչ բավարար լինելու պատճառով.

3.2.2. ասոցիացիայի գրավոր հարցման հիման վրա տրամադրում է տեղեկատվություն լիազոր մարմնի հետ համագործակցության ոլորտում գործունեության ուղղությունների, ինչպես նաև համատեղ իրականացվող ծրագրերի մասին՝ պահպանելով անձնական և բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալների մշակմանը ներկայացվող օրենքով սահմանված պահանջները.

3.2.3. իր իրավասության շրջանակներում Ասոցիացիային տրամադրում է խորհրդատվություն՝ համատեղ իրականացվող նախագծերի և ծրագրերի շրջանակներում.

3.2.4. առողջապահության բնագավառում ձևավորվող աշխատանքային խմբերում, հանձնաժողովներում, խորհուրդներում ընդգրկելու նպատակով կարող է դիմել Ասոցիացիային՝ մասնագետների թեկնածություններ ներկայացնելու համար.

3.2.5. կարող է դիմել Ասոցիացիային՝ լիազոր մարմնի կամ այլ մարմնի կողմից մշակված առողջապահության բնագավառի իրավական ակտերի նախագծերը մասնագիտական շրջանակում քննարկելու և դրանց վերաբերյալ կարծիք ներկայացնելու համար, ինչպես նաև կոնկրետ հարցերի շուրջ մասնագիտական դիրքորոշում ստանալու համար:

4. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՉԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

4.1. Սույն համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում առաջացած վեճերը կամ տարաձայնությունները կարգավորվում են համագործակցող Կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

4.2. Սույն Համաձայնագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.3. Կողմերի միջև համագործակցության ոլորտում պարտավորությունների կատարման արդյունավետության և հսկողության նպատակով Ասոցիացիաները առնվազն 3 (երեք) ամիսը մեկ լիազոր մարմին գրավոր տեղեկատվություն են ներկայացնում համագործակցության շրջանակներում ընթացիկ աշխատանքների կատարման վերաբերյալ:

4.4. Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները երկու և ավելի անգամ չկատարելու դեպքում Կողմերից յարաքանչյուրն իրավունք ունի դուրս գալ համագործակցությունից՝ մյուս կողմին 10 (տաս) օր առաջ գրավոր ծանուցում ուղարկելով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Համաձայնագրի գործողության ընթացքում Կողմերի միջև ծանուցումները համարվում են պատշաճ, եթե կատարված են գրավոր և տրված են առձեռն՝ ստորագրությամբ, կամ ուղարկված են պատվիրված նամակով կամ Կողմերին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեով:

5.2. Սույն Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմից տրվում է մեկական օրինակ

6. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ